

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմսնաբ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊԶԲ-24/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	<p>Կոշիկ`ամենօրյա, շտաբային;Կոշիկը կարճաճիտք է, արտաքին տեսքը սպորտային ոճի, թեթև, հարմար ամենօրյա կրման համար, քուղերով: Կոշիկի կիսազույգի քաշը 41 չափսի համար միջինում պետք է կազմի 400-450գրամ:</p> <p>Կոշիկը բաղկացած է կոշկերեսի երեսամասից, հետնամասից, կարճ ճտքային փափուկ եզրակից, լեզվակից, հիմնական ներդիրից, ներբանից: Կոշիկի երեսամասը, հետնամասը, ճտքի եզրակի և լեզվակի արտաքին շերտերը արտադրվում են 1.3 - 1.5 մմ հաստությամբ բնական SOFT տեսակի հարթ կաշվից` սև գույնի, առանց նակատի (արգելվում է օգտագործել սպիլոկ կամ խոզի կաշի):Առաջամասը մշակվում է հինգ դետալներից , որոնք միանում են միմյանց զույգ կարերով` մշակված զույգ կարի մեքենայով: Առաջամասը միանում է վերին փափուկ եզրակին և ետևամասի ձևավոր դետալին ևս զույգ կարերով` մշակված զույգ կարի մեքենայով: Կոշիկի ետևամասերի արտաքին դետալների կարի ամրությունը պետք է կազմի ոչ պակաս 140-145 Ն/սմ համաձայն ԳՕՍՏ 9290-76 -ի:</p> <p>Կոշիկի կապումն իրականացվում է սև գույնի քուղերով` որոնք անցնում են 5 զույգ մետաղական փոլակներով: Քուղերը անջրանցիկ նյութից են` վերջամասի 1.5սմ հատվածները թերմոմշակում անցած: Լեզվակը և ճտքային վերին փափուկ եզրակը մշակվում են եռաշերտ փաթեթով` վերին շերտը բնական կաշի, նեսի շերտը այծի կամ ոչխարի կաշի, իսկ մեջտեղում տեղադրված է սպունգանման նյութ: Կոշիկը ներսից ամբողջությամբ լրացուցիչ մշակվում է ոչ գործվածքային սոսնձապատ միջնապաստառով և 0.7-0.9 մմ հաստությամբ նրբակաշվով` այծի կամ ոչխարի: Քթամասում ներսից մշակվում է 1.2 - 1.3մմ հաստության թերմոպլաստե նյութով, իսկ կրնկամասը` ներսից մշակվում է 1.3-1.4 մմ հաստության թերմոպլաստե նյութով: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձով</p>

կարակցված, առնվազն 1.8 - 2.2 մմ հաստության բնական հումքից՝ պաղոշից և կոշիկի համար նախատեսված 1.8մմ հաստության սովարաթղթից, որոնց մեջտեղում տեղադրվում է մետաղական սուպինատոր:Արտաքին ներբանը պատրաստված է երկգոլյնանի (գոլյների երանգները նախապես պետք համաձայնեցնել պատվիրատուի հետ) մաշակայուն, ջերմակայուն և ցրտադիմացկուն առաջին կարգի տերմոէլաստոպլաստից՝ արտահայտված պաշպանաշերտով: Կոշիկի տակամասի ամրեցման ամրությունը (պատռման լարվածությունը, разрывная нагрузка) պետք է կազմի 81-85 Ն/սմ համաձայն ԳՕՍՏ 9292-82, իսկ ճկունությունը 11.5 - 13 Ն/սմ համաձայն ԳՕՍՏ 9718-88: Արտաքին ներբանը կոշիկին միանում է սոսնձման եղանակով, բարձր ճնշման տակ: Ներբանի արտաքին տեսքը և գոլյնը համաձայնեցվում են պատվիրատուի հետ: Փաթեթավորումը՝ յուրաքանչյուր գոլյգը տեղադրվում է տուփի մեջ, յուրաքանչյուր 8-12 գոլյգ տեղադրվում են մեկ արտաքին սովարաթղթե արկղի մեջ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը:Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պատսխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի 2-3 տարբեր չափսերի նմուշներ, որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար շահագործման ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը 20 աշխատանքային օրվա ընթացքում անհատույց փոխարինել նորերով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Армснаб в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԿԾ-ՏՆՏԿ-ԲԱՃԱՊՁԲ-24/1-ՀԱՆԴԵՐՁԱԼՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	